



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Յուլիս 2013 - Յունիս 2015

ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
Ներկայացուած՝
ՀՕՄ-ի Գանատայի 92-րդ եւ Գանատայի Շրջանի 22-րդ Պատգամաւորական Ժողովին
26, 27 եւ 28 Յունիս, 2015
ՄՈՆԹՐԷԱԼ

ՀՕՄ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Երկամեայ Տեղեկագիր 2013- 2015

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան 2013-2015 տարեշրջանի առաջին ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 7 Յուլիս, 2013-ին, շրջանիս 21-րդ Պատգամաւորական Ժողովի աւարտին, Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան շրջանաւարտ եւ նորընտիր կազմին եւ 21-րդ Պատգամաւորական Ժողովի դիւանի ատենապետներ՝ ընկհ. Մարօ Ֆրունճեանի եւ Զեփիւռ Տորնայի, ատենադպիրներ՝ ընկհ. Անի Պապիկեանի եւ Արմիկ Սաֆարեանի:

Ժողովը միաձայնութեամբ կատարեց վարչական պաշտօններու բաժանումը հետեւեալ ձեւով:

Ատենապետ	Ընկհ. Սեդա Մալխասեան	Մոնթրէալ
Փոխ-ատենապետ	Ընկհ. Յասմիկ Բաբիսեան	Թորոնթօ
Քարտուղար եւ ատենադպիր	Ընկհ. Անի Թաշճեան	Մոնթրէալ
Հաշուապահ	Ընկհ. Անի Օհանեան	Լաւալ
Գանձապահ	Ընկհ. Արմինէ Կարապետեան	Մոնթրէալ
Խորհրդական	Ընկհ. Իռեն Թիլիմեան	Թորոնթօ
Խորհրդական	Ընկհ. Սիլվա Գարբուզեան	Մոնթրէալ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային 21-րդ Պատգամաւորական ժողովէն ընտրուած փոխ անդամներ.-

Մոնթրէալ	
Ա.- Փոխ անդամ	Ընկհ. Նայիրի Ֆրունճեան
Բ.- Փոխ անդամ	Ընկհ. Նոյեմի Եաղճեան

Թորոնթօ	
Ա.- Փոխ անդամ	Ընկհ. Արփի Աճեմեան
Բ.- Փոխ անդամ	Ընկհ. Մարալ Սէթեան

Լաւալ	
Ա.-Փոխ անդամ	Ընկհ. Ազգանուշ Հատիտեան

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Ժողովներ - Շրջանային Վարչություն

7 Յուլիս, 2013 - 25 Յունիս, 2015 Շրջանային Վարչությունս գումարեց 18 լիազումար ժողովներ, ինչպես նաև շաբաթական դրութեամբ աշխատանքային նիստեր գրասենեակէն ներս, որոնց յաճախակիօրէն համակարգչային կամ հեռաձայնային հաղորդակցութեամբ միացան Օնթարիոյի շրջանի վարչական ընկերուհիները:

Վարչությունս լիազումար ժողովներու ընթացքին բժախնդրութեամբ քննեց օրակարգերու իւրաքանչիւր հարց եւ կայացուց որոշումներ ծրագիրներու կիրարկման համար: Օրակարգերը ընդգրկեցին ՀՕՄ-ի 21-րդ Պատգամատրական Ժողովէն բխած բանաձեւերու իրագործում, Շրջանային վարչութեան տարեկան մնայուն ծրագիրներ, յատկապէս՝ Յեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման ձեռնարկներու համագործակցութիւն, Գանատայի Շրջանի 25-ամեակի տօնակատարութիւն եւ ամէնօրեայ երկրորդական վարժարաններու մրցանակի հիմնադրութիւն, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ծրագիրներ, յատկապէս՝ ՀՕՄ-ի Հիմնադրամ դրամահաւաք, Ռազմավարական ծրագրում, Նիւ Եորքի սեմինար եւ ժողովիս ուշադրութեան յանձնուած այլ հարցեր:

Շրջանային վարչութեանս գործունէութեան բարոյական եւ նիւթական բաժնի բոլոր մանրամասնութիւններու գրաւոր պատճենները կը մնան վարչութեանս արխիւներուն մէջ:

Վարչութեանս երդուեալ հաշուապահն է Պրն. Մուրատ Արմուտլուն, իրաւաբանն է Պրն. Արմենակ Գազանճեան:

Հաշուապահութեան աշխատանքները կը կատարուին Quick Pro ծրագրով:

Ներկայացուցչական դրութիւն

Մասնաճիւղերուն հետ մնայուն կապ պահելու, աշխատանքները հետապնդելու, ուղղութիւն տալու եւ խորհրդակցելու միտումով՝ վարչությունս հետեւեալ ներկայացուցիչները նշանակեց մասնաճիւղերուն մօտ:

Ընկհ. Բաբիսեան Յասմիկ	Համիլթըն «Արեւ» Սէնթ Գաթրինգ «Արագ» Գէմպրիճ «Մեդրի»
Ընկհ. Թիլիմեան Իռեն	Թորոնթօ «Ռուբինա» Միսիսկա «Առագաստ»
Ընկհ. Գարբուզեան Սիլվա	Օթթաուա «Սեւան» Ուինծըր «Ռուբինա»
Ընկհ. Մալխասեան Սեդա	Լաւալ «Շուշի» (2013-2014)
Ընկհ. Կարապետեան Արմինէ	Մոնթրէալ «Սօսէ» (2013-2014) Լաւալ «Շուշի» (2014-2015)
Ընկհ. Օհանեան Անի	Վանգուվըր «Արագ» Մոնթրէալ «Սօսէ» (2014-2015)

Մասնաճիւղերու այցելութիւններ

Երկամեայ շրջանի ընթացքին, Շրջանային վարչութիւնը հանգամանօրէն քննեց մասնաճիւղերու գործունէութիւնները, հայթայթեց տեղեկութիւններ եւ ի պահանջեալ հարկին՝ թելադրութիւններով եւ ցուցմունքներով ապահովեց բոլորին ներդրումն ու աշխոյժ մասնակցութիւնը:

Մասնաճիւղերու այցելութիւնները կատարուեցան հետեւեալ ժամանակացոյցով:

18 Հոկտեմբեր 2013	Թորոնթօ «Ռուբինա» վարչական հանդիպում
19 հոկտեմբեր 2013	Սէնթ-Գաթրինգ «Արագ» անդամական հանդիպում Համիլթըն «Արեւ» վարչական հանդիպում Գէմպրիճ «Մեդրի» անդամական հանդիպում
20 Հոկտեմբեր 2013	Ուինծըր «Ռուբինա» անդամական հանդիպում Միսիսկա «Առագաստ» անդամական հանդիպում
10 Նոյեմբեր 2013	Լաւալ «Շուշի» վարչական հանդիպում
23 Փետրուար 2014	Մոնթրէալ «Սօսէ» վարչական հանդիպում
25 Մայիս 2014	Օթթաուա «Սեւան» անդամական հանդիպում
13-14 Սեպտեմբեր 2014	Վանգուվըր «Արագ» վարչական եւ անդամական հանդիպումներ

Այս այցելութիւնները միշտ եղան լրիւ կազմով, ի բացառեալ Վանգուվըրի «Արագ» մասնաճիւղէն: Սոյն մասնաճիւղին այցելեց ընկհ. Անի Օհանեան:

Այցելութիւններու ընթացքին արծարծուեցան իւրաքանչիւր շրջանի մտահոգութիւններն ու դժուարութիւնները, անդամական վիճակը, ՀՕՄ-ի քարոզչական աշխատանքի կարելորութիւնը, վարչութիւններու նիւթական

պարտաւորութիւնները, մասնաճիւղերու մօտ վարչական անդամ գտնելու դժուարութիւնը եւ երիտասարդ ուժերու ներդրումը: Ներկայացուեցան նաեւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի եւ Կեդրոնական Վարչութեան ծրագիրները:

Յարաբերական

Վարչութիւնս ներկայ գտնուեցաւ մասնաճիւղերու անդամական ժողովներուն, ձեռնարկներուն, տարեկան տօնավաճառի բացման հանդիսութեանց եւ հիմնադրութեան տօնակատարութեանց:

26 Յունուար, 2014-ին Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի ՀՕՄ-ի Օրուայ տօնակատարութեան բանախօսելու հրաւերին ընդառաջելով, ներկայ գտնուեցաւ վարչութեանս ատենապետ ընկի. Սեդա Մալխասեան եւ փոխանցեց օրուայ պատշաճ պատգամը:

9 Մարտ, 2014-ին, Համիլթընի «Արեւ» մասնաճիւղի ՀՕՄ-ի Օրուայ տօնակատարութեան, բանախօսեց ընկի. Իոեն Թիլիմեան եւ 22 Մարտ, 2015-ին՝ ընկի. Յասմիկ Բաբիսեան:

Մարտ 2014-ին, Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի երկարամեայ գործունեայ ընկերուհի Արմէնուհի Փիլիկեանի 100-րդ տարեդարձի առիթով, Շրջանային վարչութեան ընկերուհիներ զինք այցելեցին: Այս իւրայատուկ առիթով, ընկերուհիին զուակը՝ Պրն. Դրօ եւ տիկինը ընկի. Աննա Փիլիկեան հիմնեցին «Արմէնուհի Փիլիկեան» հիմնադրամը:

7 Յունիս 2014-ին, Սէնթ Գաթրինգ «Արագ» մասնաճիւղի ՀՕՄ-ի Օրուայ պատգամը փոխանցեց ընկի. Յասմիկ Բաբիսեան:

2 Մայիս 2015-ին, Ուինձըրի «Ռուբինա» մասնաճիւղը նշեց իր 35ամեակը, որու ընթացքին ընկի. Իոեն Թիլիմեան փոխանցեց Շրջանային վարչութեան խօսքը:

Միացեալ ժողով

Վարչութեանս հրաւերով, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ միացեալ ժողովներ Երեքշաբթի, 5 Նոյեմբեր 2013-ին եւ Երեքշաբթի, 4 Նոյեմբեր 2014-ին, մասնակցութեամբ Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղերուն:

Ժողովներու ընթացքին ներկայացուեցան Շրջ. Վարչութեան տարեկան ծրագիրները, նիւթական յատկացումները, նոր հաստատուած հիմնադրամները եւ Կեդրոնական վարչութեան ծրագիրները:

Վարչութեանս որոշումով, 4 Նոյեմբեր 2014-ի միացեալ ժողովին տեղի ունեցաւ 2014-2015 տարեշրջանի կրթաթոշակի տուչութիւն Քէպէքի շրջանի թեկնածուներուն:

Միջ-վարչական հանդիպում

Միջ-վարչական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 19 Հոկտեմբեր 2014-ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնէն ներս: Շրջանային վարչութեան լրիւ կազմի կողքին, ներկայ էր Կ.Վ. փոխ-ատենապետ եւ Գանատայի Շրջանի ներկայացուցիչ ընկի. Նայիրի Շահինեան, ինչպէս նաեւ 9 մասնաճիւղերու վարչական ընկերուհիներ թիւով 37:

Վարչութիւնս ամփոփ ձեւով ներկայացուց իր միամեայ գործունէութիւնը: Ժողովի դաստիարակչական բաժինը ընդգրկեց մասնաճիւղերու գործունէութեան ուղեցոյցի ներկայացում, դիմատետրի ու կայքէջի մասին տեղեկութիւններ եւ աշխատանիստ վարչական պաշտօններու մասին: Մոյն ժողովը արժանացաւ ներկայ ընկերուհիներու բարձր գնահատանքին:

Տեղի ունեցաւ 2014-2015 տարեշրջանի կրթաթոշակի տուչութիւն Օնթարիոյի շրջանի թեկնածուներուն:

ՀՕՄ-ի Ննջեցեալներու Հոգեհանգիստ

Վարչութեանս խնդրանքով, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդի կոչը ուղղուեցաւ Գանատայի Կիլիկիոյ Թեմի Առաքելական բոլոր եկեղեցիներուն, ուր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ՀՕՄ-ի շարքերէն առ յաւէտ բաժնուած ընկերուհիներու ու բարերարներու յիշատակին Կիրակի, 23 Փետրուար 2014-ին եւ Կիրակի, 22 Փետրուար 2015-ին: Իսկ, Օթթաուայի, Համիլթընի եւ Միսիսսոկայի մասնաճիւղերը հոգեհանգստեան պաշտօնները կատարեցին տեղւոյն Էջմիածնական Թեմի եկեղեցիներուն մէջ:

Սուրիահայ երեխաներու կադանդէք

Շրջանիս 21-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 12 բանաձեւին համաձայն, յաջորդ երկու տարիներուն համար, մասնաճիւղերը իւրաքանչիւր անդամի համար, վարչութեանս փոխանցեցին 7 տոլար որպէս կադանդէք սուրիահայ մանուկներուն: Այսպէս, երկու տարուայ համար Կեդրոնական վարչութեան փոխանցեցինք 17,647 ամ. տոլար: Մոյն օժանդակութիւնը յատկացուեցաւ Հալէպի Ազգային չորս վարժարաններուն եւ մանկապարտէզին, ինչպէս նաեւ Համայնքային երեք մանկապարտէզներու աշակերտութեան, Ս.Օ.Խաչի աշխատանոցէն ներս բաճկոններ պատրաստելով՝ առաջին տարին 750 եւ երկրորդ տարին 885 աշակերտներու եւ Ազգ. Պատսպարանի սաներուն:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 25-ամեակ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 25-ամեակը պիտի նշուի հանդիսաւոր կերպով, Ուրբաթ, 26 Յունիս, 2015-ին, Le Crystal շքեղ սրահէն ներս: Ճաշկերոյթ-հանդիսութիւնը կը հովանաւորէ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մեղրիկ Սրբ. Եպս. Բարիքեան եւ կը նախագահէ Գանատայի Շրջանի անդրանիկ ատենապետ ընկի. Վանուհի Իսաջանեան: Հանդիսութիւնը կը վայելէ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Պրն. Արմէն Եգանեանի եւ Տիկ. Մարիա Եգանեանի ներկայութիւնը:

Այս առթիւ, նշանակուեցաւ յանձնախումբ մը բաղկացած նախկին Շրջանային վարչութեան ընկերուհիներէ:

Կանոնագիր

ՀՕՄ-ի Գանատայի բարեփոխուած Կանոնագիրը՝ վաւերացուած Գանատայի 17-րդ Շրջանային Պատգամաւորական ժողովին, Յուլիս 2007 եւ 19-րդ Պատգամաւորական ժողովին, Յունիս 2009, փոխանցուեցաւ մասնաճիւղերուն Գանատայի Շրջանային վարչութեան շրջաբերական թիւ 18-ի միջոցաւ, թերթիկի ձեւով: Կանոնագիրը գրքոյկի նման պիտի տպուի, երբ Կեդրոնական վարչութեան կանոնագիրը պատրաստ ըլլայ իր վերջնական փոփոխութիւններով:

Հայաստանագնացութիւն

Հիմնուելով Շրջանիս 21-րդ Պատգամաւորական ժողովէն բխած՝ քարոզչական ծիրէն ներս, բանաձեւ թիւ 7-ի տրամադրութեան, վարչութիւնս կը կազմակերպէ Շրջապտոյտ դէպի Հայաստան, 22 Սեպտեմբերէն 6 Հոկտեմբեր 2015: Վարչութիւնս նշանակեց ընկի. Աննա Պուլկարեան պատասխանատու աշխատանքներու կազմակերպութեան ու համադրման համար եւ Օնթարիոյի շրջանէն գործակցեցաւ վարչութեանս անդամ ընկի. Յասմիկ Բարիսեան: Շրջապտոյտին կը մասնակցին անդամներ եւ համակիրներ, թիւով՝ 41:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Քարտուղարական

1. Առաքուած գրութիւններ

- Շրջաբերականներ.-

2013-2015 տարեշրջանի ընթացքին, մեր մասնաճիւղերուն առաքուեցան 55 շրջաբերականներ, 21-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւերը իրագործելու, անմիջական ծրագիրներ յայտարարելու եւ տեղեկութիւններ փոխանցելու համար:

- Նամակներ եւ բացիկներ.-

Վարչութիւնս իր երկամեայ գործունէութեան ընթացքին առաքած է զանազան նիւթեր արծարծող 1243 նամակներ՝ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան, ՀՕՄ-ի Շրջաններու, մեր մասնաճիւղերուն, Հ.Հ. Դեսպանատան, Հ.Հ. Սփիւռքի Նախարարութեան, Գանատայի Ազգային Առաջնորդարանին, Գանատայի Կեդրոնական Կոմիտէին, պատկան մարմիններու, քոյր միութիւններու, եւլն. եւ 91 բացիկներ՝ ընկերուհիներու, բարերարներու, ուղեկից կազմակերպութիւններու եւ պատշաճ առիթներով՝ կարգ մը ազգայիններու: Հորիզոն շաբաթաթերթին մէջ բարի ապաքինման մեր մաղթանքը եւ վշտակցութիւնը յայտնեցինք Շրջ. վարչութեան ներկայ անդամներուն, մասնաճիւղերու ներկայ վարչական անդամներուն եւ մեր յանձնախումբերու անդամներուն:

Վերոյիշեալ թիւերը չեն ներառեր մեր ամէնօրեայ ելեկտրոնային նամակագրութիւնները:

2. Ստացուած գրութիւններ

- Նամակներ

Այս տարեշրջանի ընթացքին ստացած ենք 227 նամակներ եւ 25 բացիկներ:

- Կեդրոնական Վարչութեան Շրջաբերականներ եւ Յուշանօթեր

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութենէն ստացած ենք 48 շրջաբերականներ, 34 նամակներ, 25 Ե-նօթեր, 18 մամլոյ հաղորդագրութիւններ, 1 շրջաբերական-նամակ, 1 լրատուութիւն, 1 տեսերիզ, Կոչ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, Շրջանիս հիմնադրութեան 25-ամեակի շնորհաւորական խօսք եւ ել-նամակով ստացուած բազմաթիւ նօթեր: Վարչութիւնս օրին ընթացք տուած է Կեդրոնական վարչութեան կողմէ յղուած բոլոր շրջաբերականներուն եւ յուշանօթերուն երբեմն հայցելով մասնաճիւղերու օժանդակութիւնը:

ՄԱՍՆԱՃԻՒԴԵՐ

Գործունէութիւն

Երկամեայ այս շրջանի ընթացքին, Շրջանային վարչութիւնը մասնաճիւղերուն հետ գործակցաբար շարունակեց իրագործել 21-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւերը: Մեր տասը մասնաճիւղերը իրենց գործօն մասնակցութիւնը բերին զանաատահայ գաղութի ազգային-քաղաքական կեանքին:

Մասնաճիւղերու վարչութիւնները իրենց հերթական ժողովները գումարեցին ընդհանրապէս շաբաթական դրութեամբ, իսկ անդամական ժողովները՝ ամսական դրութեամբ: Կազմակերպեցին ճաշկերոյթ, խրախճանք, պարահանդէս, քայլարշաւ,

ճաշերու դասընթացք, տօնավաճառ, աւանդական եւ կրօնական բնոյթով ընկերային ձեռնարկներ, որոնց հասոյթով կրցան նիւթական յատկացումներ կատարել թէ՛ Հայրենիքի եւ թէ՛ իրենց շրջաններու մէջ օտար կազմակերպութիւններուն, գաղութի կրթական օճախներուն, Հայ կեդրոններուն եւ քոյր միութիւններուն:

Դաստիարակչական եւ անդամարշաւի նպատակով, մասնաճիւղերը կազմակերպեցին առողջապահական եւ ընկերային նիւթերու շուրջ դասախօսութիւններ, ինչպէս նաեւ ՀՕՄ-ի գործունէութիւնը ծանօթացնող քարոզչական ձեռնարկներ: Միասնաբար գումարեցին ժողովներ, եւ կազմակերպեցին ՀՕՄ-ի Օրուան տօնակատարութիւն, Կանանց Միջազգային Օր, ինչպէս նաեւ փոխադարձ այցելութիւններով խանդավառեցին զիրար տօնական օրերու կամ այլ առիթներով:

Անոնք իրենց նիւթական պարտաւորութիւնները կատարեցին Շրջանային վարչութեան եւ ըստ մեր բանաձեւերու տրամադրութեանց օժանդակեցին եւ գործնականօրէն մասնակցեցան ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ծրագիրներուն:

Շրջանային վարչութեան ծրագիրներ եւ յատկացումներ՝

- Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատուն
- Գրպանի օրացոյց
- Սրտէ Սիրտ խմբակցութիւն
- Հորիզոն Շաբաթաթերթ եւ Մանկապատանեկան
- Սուրիահայ երեխաներու կադանդչէք
- Հայ Դատ
- ՀՕՄ-ի ննջեցեալներու եւ բարերարներու հոգեհանգիստ

Կեդրոնական վարչութեան ծրագիրներ եւ յատկացումներ՝

- Ամանոր Ծրագիր
- Ջաւախքի օժանդակութիւն
- Սուրիահայութեան օժանդակութիւն
- Տաք Ճաշ Ծրագիր
- Որբախնամ եւ Ուսանող Ծրագիրներ
- «Սօսէ» մանկապարտէզ
- Վիճակահանութեան տոմսեր
- Հիմնդրամ-դրամահաւաք

ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

2013 - 2015

	Անդամներ				Ժողովներ 2013/3015	
	Նոր 2013/14	Նոր 2014/15	Ընդհանուր 2013/14	Ընդհանուր 2014/15	Անդամական	Վարչական
Արեւ Համիլթըն	-	-	31	30	18	21
Մեդրի Գեմպրիճ	1	-	33	33	15	25
Մեւան Օթթաուա	2	-	47	45	14	14
Առագաստ Միսիսոկա	1	-	27	27	16	9
Արագ Սէնթ Գաթրինգ	-	-	22	21	14	7
Ռուբինա Ուինձըր	-	-	21	20	17	10
Շուշի Լաւալ	-	-	246	190	18	60
Արագ Վանգուվըր	-	2	43	33	15	21
Ռուբինա Թորոնթօ	10	9	398	399	22	94
Սօւէ Մոնթրէալ	5	18	400	408	16	71
ԸՆԴՀԱՆՈՒՐ	19	29	1,268	1,206	165	332

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

Սեմինար

2014 տարեշրջանի սեմինարը տեղի ունեցավ Ապրիլ 5-ին Միսիսկայի մեջ, մասնակցութեամբ 112 անդամներու եւ համակիրներու: Ի բացառեալ Ուինծըրէն եւ Վանգուվըրէն, բոլոր մասնաճիւղերը ներկայութիւն արձանագրեցին: Դասախօսները եւ ընտրուած նիւթերը արժանացան ներկաներու գնահատանքին, իսկ պանդոկին մատուցած ծառայութիւնները շատ լաւ էին:

Սեմինարը ընթացաւ հետեւեալ ձեւով: Առաջին հերթին, Կ.Վ. փոխ-ատենապետ եւ Գանատայի շրջանի ներկայացուցիչ ընկի. Նայիրի Շահինեան ամփոփ ձեւով զեկուցեց Կեդրոնական Վարչութեան ծրագիրներուն մասին: Ապա, Պր. Վահան Զանոյեան՝ յատկապէս հրաւիրուած Գալիֆօրնիայէն, ներկայացուց իր գիրքը A Place Far Away: Տեղի ունեցաւ հարց -պատասխան եւ գիրքի մակագրութիւն հեղինակին կողմէ: Տոքթ. Ճէնի Տօլմաճեան հմուտ ձեւով բացատրեց Կազմողական վիրաբուժութեան (Plastic Surgery) իրականութեան մասին եւ պատասխանեց ներկաներու հարցումներուն: Առ ի գնահատանք իրենց սիրայօժար մասնակցութեան, երկու դասախօսողներուն նուիրուեցինք Հրայր Բազէ Խաչերեանի One Church One Nation գիրքը:

Յայտագրի աւարտին, տեղի ունեցաւ աշխատանիստ՝ «Ի՞նչպէս կը կարծէք որ Հայ Օգնութեան Միութիւնը պէտք է նշէ Ցեղասպանութեան 100-ամեակը, Գանատայի տարածքին»: Իսկ գիշերը՝ խրախճանք:

2015 տարեշրջանին, մասնակցեցանք ՀՕՄ-ի ԿՎ կազմակերպած սեմինարին՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակին, Նիւ Եորք քաղաքի մէջ:

ԿՐԹԱԿԱՆ

Շրջանային Վարչութեան Կրթաթոշակ

2013-2014 տարեշրջանին ստացանք 14 դիմումնագրեր, իսկ 2014-2015 տարեշրջանին՝ 17 դիմումնագրեր: Հիմնուելով պատգամաւորական ժողովէն վաւերացուած նախահաշիւին վրայ, իւրաքանչիւր տարեշրջանի, Կրթաթոշակի յանձնախումբը նկատի ունեցաւ 10 թեկնածուներ:

Վարչութեանս վաւերացումով իւրաքանչիւր ուսանողի յատկացուեցաւ \$1,000.00:

2013-2014 տարեշրջանին կրթաթոշակ ստացան հետևեալ ուսանողները:

Աբանեան Սեւան	Մոնթրեալ
Ակոբեան Դալար	Մոնթրեալ
Բլեզանս Քարին	Մոնթրեալ
Մուրատեան Գարլա	Մոնթրեալ
Ֆուտուլեան Վանա	Մոնթրեալ
Քազարեան Գասբար	Լաւալ
Բաբիսեան Շահէ	Թորոնթօ
Կապրիէլ Նազիկ	Թորոնթօ
Մինասեան Սիրունիկ Սիրան	Թորոնթօ
Պօղոսեան Քրիսթա	Թորոնթօ

2014-2015 տարեշրջանին կրթաթոշակ ստացան հետևեալ ուսանողները:

Ոսկեան Լելակ	Մոնթրեալ
Բլեզանս Քարին	Մոնթրեալ
Պուլկարեան Աննա	Մոնթրեալ
Խորէն Ալիք	Մոնթրեալ
Փօլատեան Սեւանա	Լաւալ
Նաճիար Քարինա	Լաւալ
Պոյաճեան Արագ	Լաւալ
Մինասեան Բօզալի	Թորոնթօ
Սիմոն Թամար	Վանգուվըր
Օհանեան Քարին	Սէնթ Գաթրինգ

Վարչութիւնս կը թելադրէ յետ այսու եւ կարելիութեան սահմաններուն մէջ, կրթաթոշակի վճարագրերը անձնապէս յանձնել թեկնածուներուն:

Կրթական Օճախներ

2013-2015 տարեշրջանին վարչութիւնս կատարեց իր նիւթական օժանդակութիւնները կրթական հաստատութիւններուն, ամէնօրեայ եւ շաբաթօրեայ վարժարաններուն, ամառնային ճամբարներուն, ծաղկոցներուն եւ Մոնթրեալի մանկամտորին, նաեւ ըստ կարելիութեան ընդառաջեց տարեշրջանի ընթացքին անոնց կողմէ եղած բոլոր հրաւերներուն, ըլլան անոնք տօնակատարութիւն, ելոյթ կամ ամավերջի հանդէս:

Շրջանային վարչութեան մրցանակ

Յունիս 2015-ին, վարչութիւնս որոշեց հիմնել «ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութեան» անուամբ մրցանակ մը, ՀՕՄ-ի կամաւոր գործունէութեան լայնածաւալ

իրականութիւնը՝ ազգային եւ մարդասիրական ոլորտներէն ներս ծանօթացնելու միտումով մեր ապագայ սերունդին: Սոյն մրցանակը պիտի շնորհուի Գանատայի ամէնօրեայ վարժարաններու երկրորդական բաժանմունքի աւարտական դասարանէն այն աշակերտին, որ օրինակելի կամաւոր աշխատանք ցուցաբերած է դպրոցէն ներս: Թեկնածու աշակերտը պարտի ամբողջացնել հետեւեալ պայմանները՝ առաջնորդի յատկանիշներ եւ գործօն մասնակցութիւն դպրոցական կեանքէն ներս, ինչպէս աւելի փոքր տարիքի աշակերտներուն եւ ձեռնարկներու կազմակերպական աշխատանքին: Մրցանակի նիւթական արժէքն է 250 գան. տոլար:

2015-ին մրցանակին արժանացան Թորոնթոյի ՀՕՄ-ի Երկրորդական վարժարանէն Ստեփան Ժոլի եւ Մոնթրէալի Սրբ. Յակոբ Ազգ. վարժարանի Բաստրմաճեան Երկրորդականէն՝ Արագ Գիւլպանճեան:

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ

21-րդ Պատգամաւորական ժողովի աւարտին, Օգոստոս 2013-ին, Հորիզոն Շաբաթաթերթին մէջ լոյս տեսաւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան 2011-2013 տարեշրջանի ամփոփ տեղեկագիրը:

Լրատու

2014-ին, Լրատուն լոյս տեսաւ Հորիզոն Շաբաթաթերթին մէջ 28 էջերով եւ ձօնուեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակին՝ Տարեցներու տարուան, իսկ 2015-ին, 32 լայնածաւալ էջերով ձօնուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին եւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 25-ամեակին:

Կայքէջ

Կայքէջը անընդհատ թարմացման դրութեան մէջ է: 2013-2015 տարեշրջանին, ընկ. Շահէ Բաբիսեան նշանակուեցաւ կայքէջի պատասխանատու եւ կատարեց իրեն ուղարկուած բարեփոխութիւնները: Մեծապէս կը գնահատենք եւ սրտանց շնորհակալ ենք ընկ. Բաբիսեանին իր սիրայօժար օժանդակութեան եւ ներդրումին:

Դիմատետր

2013-2015 տարեշրջանին, Դիմատետրի ներկայացուցիչ նշանակուեցաւ վարչութեանս անդամ ընկ. իռէն Թիլիմեան: Ընկ. Թիլիմեան անընդհատ կապի մէջ գտնուեցաւ իւրաքանչիւր մասնաճիւղի դիմատետրի ներկայացուցիչի հետ, նորութիւնները զետեղելու եւ լուրերը սփռելու:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Եկամուտի Աղբիւրներ

- **Տարետուրք**

Բոլոր մասնաճիւղերը ժամանակին կատարած են իրենց տարետուրքերու վճարումները:

- **Գրպանի օրացոյց**

2013-2015 տարեշրջանին, գրպանի օրացոյցի յանձնախումբի անդամներու ջանքերուն շնորհիւ, իրագործուեցաւ այս ծրագիրը: Հասոյթին մեծ բաժինը գոյացաւ ծանուցումներէ, իսկ մնացեալը՝ անդամներու եւ ազգայիններու նուիրատուութիւններէ: 2014-ին, գրպանի օրացոյցի կողքի էջը հովանաւորեց Sleep Comfort հաստատութիւնը, իսկ 2015-ին՝ Lugaro հաստատութիւնը:

- **Սրտէ Սիրտ**

«Սրտէ Սիրտ» խմբակցութիւնը կը բաղկանայ 148 անդամներէ եւ շրջանիս 10 մասնաճիւղերէն: Կարելի է խմբակցութեան անդամակցիլ տարեկան \$100 նուիրելով: Ծրագրէն գոյացած եկամուտը, կ'օգտագործուի վարչութեանս ուսումնական տարեկան յատկացումներուն:

- **Այլ Աղբիւրներ**

2013-2015 տարեշրջանին զանազան առիթներով, մեր ընկերուհիներու կատարած կամաւոր աշխատանքին եւ ազգայիններու ջանքերուն շնորհիւ, ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները օտար կազմակերպութիւններէ եւ ընկերութիւններէ:

CN	\$	2,500.00
CN EMPLOYEE'S PENSION FUND	\$	5,493.00
STANDARD LIFE	\$	1,400.00
UNITED WAY	\$	976.00
SCOTIA BANK	\$	2,000.00
DESJARDINS	\$	1,100.00
TELUS	\$	200.00
UNITED WAY TORONTO	\$	742.00
BMO (4 EMPLOYEES)	\$	990.00
FONDATION DU GRAND MONTREAL	\$	500.00
ԸՆԴՀԱՆՈՒՐ	\$	15,901.00

○ **Նոր հաստատուած ֆոնտեր**

Յուլիս 2013-ին, ընկ. Ռիթա Օհանեան եւ ընտանիք, իրենց ամուսնոյն եւ հօր յիշատակին հիմնեցին Արսէն Օհանեան ֆոնտը: Ֆոնտի ընդհանուր գումարն է \$20.000.00: Հասոյթը պիտի յատկացուի Շրջանային վարչութեան կրթաթոշակներու ծրագրին:

Մարտ 2014-ին, Պրն. Դրօ եւ Տիկինը ընկ. Աննա Փիլիկեաններ հիմնեցին իրենց մօր Արմէնուհի Փիլիկեանի անուան ֆոնտ մը, նուիրելով \$10,000.00, որուն հասոյթը պիտի յատկացուի Շրջանային վարչութեան կրթաթոշակներու ծրագրին:

Ստացանք նաեւ հետեւեալ գումարները՝ Ճեսուրեան ֆոնտին 2,000 ամ. տոլար, Վարուժան Պասթաճեան ֆոնտին 3,000 ամ. տոլար եւ Տիգրանուհի Արթինեան ֆոնտին \$20,000:

○ **Կտակներու Եկամուտ**

Օգոստոս 2014-ին, ստացանք ողբացեալ Մանիկ Տայլերեանի կտակէն \$54,531.50 եւ հիմնեցինք «Ագրիպաս եւ Մանիկ Տայլերեան» հիմնադրամը, որուն շահարկման տոկոսը պիտի յատկացուի Ախուրեանի Մօր ու Մանկան Առողջապահական կեդրոնին եւ Արցախի «Սօսէ» Մանկապարտէզին:

2013-2015 տարեշրջանին, Բաստրմաճեան հիմնադրամէն ստացած ենք 10,000 տոլարի նուիրատուութիւն մը:

○ **Ֆոնտեր եւ Հիմնադրամ**

Մնայուն ծրագիրներու ֆոնտեր

1. ՀՕՄ-ի Արցախի «Սօսէ» Մանկապարտէզ
2. ՀՕՄ-ի Զուախքի Կրթական եւ Մշակութային ֆոնտ
3. ՀՕՄ-ի Որբերու Խնամակալութեան Ծրագիր
4. ՀՕՄ-ի Որբերու Ուսման Ծրագիր
5. ՀՕՄ-ի Մօր ու Մանկան Առողջապահական Կեդրոն

Անձեռնմխելի

1. ՀՕՄ-ի Հիմնադրամ
2. Տէր եւ Տիկին Նուպար Ճեսուրեան
3. Նայիրի Պօղոսեան-Նազարեան
4. Գրիգոր եւ Ռազմուհի Շահինեան
5. Ծովակ Խաչերեան

6. Պօղոս եւ Մարի Սահակեան
7. Վարուժան Պասթաճեան
8. Տիգրանուհի Արթինեան
9. Արսէն Օհանեան
10. Արմէնուհի Փիլիկեան
11. Ագրիպաս եւ Մաննիկ Տայլէրեան

Ֆոնտերու գումարներուն կրած փոփոխութիւնները տեսնել նիւթական տեղեկագրին մէջ:

Բացառիկ Ցատկացումներ

Ընթացիկ տարեշրջանի յատկացումներուն կը միանան հետեւեալ բացառիկ յատկացումները.-

1-Կ.Վ. Միջ-Շրջանային վարչութիւններու ժողով	\$1,000
2-Կ.Վ. Նիւ Եորքի սեմինար	\$1,000
3-Պրն. Պարէտ Մարոնեանի "Women of 1915" վաւերագրական ժապաւենի պատրաստութեան առ ի քաջալերանք	\$10,000
4-Կ.Վ. Դրամահաւաք	\$11,000
5-ՀՕՄ-ի Հայաստանի Շրջ. վարչութեան սեղանի օրացոյցներ	\$200
6-ՀՅԴ Բիրոյի ճամբար Ջաւախքի, Արցախի եւ Հայաստանի երիտասարդներուն, որ գոյացաւ Շրջ. վարչութեան եւ Մոնթրէալի ու Թորոնթոյի մասնաճիւղերու ներդրումով	\$3,000
ԸՆԴՀԱՆՈՒՐ	\$26,200 US

1-ՀՀ դեսպանատան նորոգութիւններ, որ գոյացաւ Շրջ. վարչութեան եւ իր մասնաճիւղերու ներդրումով	\$5,000
2-Հայ Դատ	\$2,000
3-Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Համագանատական Մայր Յանձնախումբ	\$6,000
4- Լաւալի Սրբ. Գեորգ Եկեղեցոյ շինարարութիւն	\$5,000
5-ՀՕՄ-ի Հայաստանի Շրջ. վարչութիւն	\$500
6-Պատանիներու Հայաստանագնացութիւն	\$1,000
7-ՀԵԴ ԳԵՄ Վանաձորի ճամբար	\$500
8-ՀՅԴ ԳԵՄ-ի Հիւսիսային Ամերիկայի Երիտասարդական Միութիւններու երակողմանի սեմինար	\$500
9- ՀՅԴ ԳԵՄ-ի Ռուբէն Հալավերտեանի համերգ	\$100
10- Lac Mégantic-ի աղէտ	\$1,000
11-Նեփալի աղէտ	\$1,900
ԸՆԴՀԱՆՈՒՐ	\$23,500 զան.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարաբերական

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան հետ մեր յարաբերութիւնները եղած են միշտ սերտ:

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան փոխ-ատենապետ եւ Գանատայի Շրջանի ներկայացուցիչ ընկի. Նայիրի Շահինեան, անձամբ եւ հեռաձայնային հաղորդակցութեամբ մաս կազմեց վարչութեանս լիազումար նիստերէն ոմանց, խորհրդակցելու եւ ՀՕՄ-ի Կ.Վ. ծրագիրները փոխանցելու:

Ընթացք տուած ենք Կեդրոնական Վարչութեան յղած շրջաբերականներուն, նամակներուն եւ յուշանօթերուն, եւ ի պահանջեալ հարկին զանոնք փոխանցած ենք մեր մասնաճիւղերուն եւ անդամներուն:

2013-2015 երկամեայ շրջանի մեր նիւթաբարոյական գործունէութեան բոլոր տուեալները անյապաղ յղած ենք Կեդրոնական Վարչութեան:

Պաշտօնական նամակագրութեան կողքին, վարչութիւնս հեռաձայնային հաղորդակցութիւններով եւ ել-նամակներով կապ հաստատած է Կեդրոնական Վարչութեան գրասենեակին հետ:

Հայաստան Համահայկական Հիմնադրամ

2013-2015-ին, Գանատայի շրջանէն հետեւեալ մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերին իրենց շրջանի Հայաստան Համահայկական Հիմնադրամի վարչութիւններուն՝

- Թորոնթօ Ռուբինա \$1,000
- Լաւալ Շուշի \$500
- Մոնթրէալ Սօսէ \$2,500

Վարչութիւնս Կ.Վ. միջոցաւ կատարեց իր 2,000 ամ. տոլարի յատկացումը՝ տարեկան 1,000 տոլարի դրութեամբ:

Հ. Հ. Հիմնադրամի Մոնթրէալի վարչութեան մօտ, 2013-2014 տարեշրջանին ՀՕՄ-ի ներկայացուցիչն էր ընկի. Ֆլօրա Կիրակոսեան, 2014-2015ին՝ ընկի. Սեդա Դանիէլեան եւ Մարտ 2015-ի ընտրութիւններէն ետք վարչութեան միացաւ ընկի. Մարալ Պերպերեան: Իսկ Թորոնթոյի վարչութեան մօտ ՀՕՄ-ի մնայուն աթոռի ներկայացուցիչն է ընկի. Հուրի Նաճարեան:

Հայոց Ցեղասպանության 100-ամեակի նուիրուած ձեռնարկներ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանը 42 անդամներով մասնակցեցաւ ՀՕՄ-ի Կ.Վ. նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ ՀՕՄ-ի ԱՄՆ Արեւելեան շրջանի Շրջանային վարչութեան, Հայոց Ցեղասպանութեան նուիրուած ձեռնարկներուն, Նիւ Եորք քաղաքին մէջ՝ Մարտ 5-7, 2015: Գանատայի Շրջանի խումբը բաղկացած էր հետեւեալ ձեռով՝ Շրջանային վարչութիւն 6 ընկերուհիներ, Թորոնթօ «Ռուբինա» 21, Միսիսոկա «Առագաստ» 9, Գէմպրիձ «Մեղրի» 3, Մոնթրէալ «Սօսէ» 2, եւ Համիլթըն «Արեւ» 1: Այս առիթով, Գանատայի խումբը ներկայ գտնուեցաւ Մարտ 5, 2015-ի երեկոյեան, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան շէնքին մէջ «Ասեղնագործել վերապրելու համար.- Հայ կիներու ձեռարուեստը» խորագրով Հայկական ձեռագործներու ցուցահանդէսի պաշտօնական բացման, կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան եւ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան Ներկայացուցչութեան:

Յաջորդ օրը, Գանատայի խումբը մասնակցեցաւ նաեւ ՀՕՄ-ի Կ.Վ. Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի յանձնախումբին ծրագրած «Վերականգնել ազգութիւն մը.- Հայ կիներու մէկ դարու դիմադրութիւնն ու հզօրացումը» խորագրով միօրեայ գիտաժողովին: Գիտաժողովին իրենց մասնակցութիւնը բերին դոկտ. Էլէնի Թեոխարուս՝ Եւրոպական խորհրդարանի անդամ, ատենապետ Եւրոմիութիւն-Հայաստան բարեկամութեան խմբաւորման, պրոֆ. Իգապէլ Գաբրիէլեան-Չըրչիլ՝ Ֆրէզնոյի համալսարանի Հայոց եւ գաղթի պատմութեանց աւագ դասախօս, Պրն. Պարէտ Մարոնեան՝ վարիչ տնօրէն Armenoid Productions-ի, նկարիչ-լրագրող Սգաուր Թուֆանգձեան եւ պրոֆ. Մարիան Մեսրոպեան ՍըզԳըրտի: Այս առիթով, առ ի գնահատանք Կեդրոնական Վարչութեան նուիրեցինք 1,000 ամ. տոլար:

Շաբաթ, 7 Մարտի առաւօտեան տեղի ունեցաւ դաստիարակչական պտոյտ դէպի Ellis Island, իսկ երեկոյեան՝ ընթրիք եւ մշակութային երեկոյ, կազմակերպութեամբ ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւելեան շրջանի Շրջ. վարչութեան, Նյու Ճըրզիայի Waterside ճաշարանէն ներս:

Պատանիներու Փոխանակման Ծրագիր

Յուլիս, 2013-ին Լաւալէն՝ Մարի-Շպիտ Ղազարեան մասնակցեցաւ Ֆրանսայի Կապոյտ Խաչի Պելֆոնթէն Կայանի ճամբարին, իսկ Օգոստոս 2013-ին Լաւալէն Դալար Անասալ, Դալիա Փալով, Լորի Մդտեսեան եւ Լալա Պարսամեան մասնակցեցան Արեւելեան Ամերիկայի Հ.Ե.Դ.-ի Պոսթընի մէջ կայացած «Գամբ Հայաստան» ամառնային ճամբարին: Ֆրանսայի Պելֆոնթէն ճամբարին ճամբորդական ծախսին 1/3-ը հոգաց Շրջանային վարչութիւնը:

Օգոստոս 2014-ին, Մոնթրէալէն Վահագն Տումանեան մասնակցեցաւ Պոսթընի Հ.Ե.Դ. «Գամբ Հայաստան» ճամբարին:

ՀՕՄ-ի Երեմեան Կրթաթոշակ

2013-2014 տարեշրջանին, Գանատայի շրջանէն հետեւեալ ուսանողները ստացան ՀՕՄ-ի Երեմեան Կրթաթոշակը՝ Առաքելեան Մարիամ եւ Օհանեան Տանիէլ: Իսկ 2014-2015-ին՝ Օհանեան Տանիէլ եւ Պէլեան Միսաք:

ՀՕՄ-ի Որբերու Խնամակալութեան Ծրագիր

2013-2015 տարեշրջանին, Գանատայի շրջանը հովանաւորեց 320 ծնողագուրկ երեխաներ: Այս նպատակով, Կ.Վ. փոխանցեցինք 63,200 ամ. տոլար: Իւրաքանչիւր տարուայ օժանդակութիւնը կատարուեցաւ երկու մասնավճարներով:

ՀՕՄ-ի Որբերու Ուսման Ծրագիր

2013-2015 տարեշրջանին, Գանատայի շրջանը հովանաւորեց 99 ուսանողներ: Այս նպատակով, Կ.Վ. փոխանցեցինք 31,680 ամ. տոլար: Իւրաքանչիւր տարուայ օժանդակութիւնը կատարուեցաւ մէկ վճարումով:

ՀՕՄ-ի «Լաւագոյն Ուսանող» Ծրագիր

Այս ծրագրին համար վարչութիւնս 4,000 ամ. տոլար (տարեկան 2,000 տոլարի դրութեամբ) փոխանցեց Կեդրոնական վարչութեան, հովանաւորելով 40 աշակերտներ, Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի մէջ: Իւրաքանչիւր աշակերտի կը փոխանցուի 100 ամ. տոլար:

Ամանոր Ծրագիր

ՀՕՄ-ի Համահայկական 70-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւին համաձայն, Նոր Տարուան առիթով կադանդէք կը տրամադրուի հայրենիքէն ներս թէ սփիւռքէն գաղութներու մէջ գործող եւ կարիքաւորներու ծառայող հիմնարկներու: Այս նպատակով, վարչութիւնս իւրաքանչիւր անդամի համար 3 ամ. տոլարի դրամահաւաքի պարտաւորութիւնը կատարեց եւ երկու տարուայ համար Կեդրոնական վարչութեան փոխանցեցինք 7,563 ամ. տոլար: Սոյն գումարը գոյացաւ մասնաձիւղերու ներդրումով:

Սուրիա

Ընդառաջելով Կեդրոնական վարչութեան սուրիահայութեան օժանդակութեան կոչին,

- Տարուկ Բնակարան ծրագրին նուիրեցինք 10,000.00 ամ. տոլար
- Սուրիահայ Վարժարաններուն նուիրեցինք 5,000.00 ամ. տոլար
- Քէսապի տազնապին նուիրեցինք 5,000.00 ամ. տոլար

ՀՕՄ-ի նաւապտոյտ

ՀՕՄ-ի Եւրոպայի 4-րդ նաւապտոյտին, որ տեղի ունեցաւ 3-15 Յուլիս 2014, Գանատայի շրջանէն 55 անհատներ մասնակցեցան նպաստելով ձեռնարկի յաջողութեան: Իսկ 5-րդ նաւապտոյտը պիտի կայանայ 13-27 Մարտ, 2016-ին եւ պիտի շրջագայի Հարաւային Ամերիկայի գանազան երկիրներու մէջ:

Գանատայի շրջանէն, ընկի. Արմինէ Կարապետեան նշանակուած է երկու նաւապտոյտներուն յանձնախումբի անդամ:

Միջ-Շրջանային վարչական ժողով

Կեդրոնական վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, Հոկտեմբեր 26, 2013-ին, Պոսթոնի մէջ տեղի ունեցաւ Միջ-վարչական ժողով՝ Գանատայի, ԱՄՆ Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու Շրջանային վարչութիւններու մասնակցութեամբ: Ժողովը կեդրոնացաւ ՀՕՄ-ի հետեւեալ ծրագիրներուն վրայ.- Ախորեանի ՀՕՄ-ի Սօր ու Մանկան Առողջապահական Կեդրոն, Արցախի ՀՕՄ-ի «Սօսէ» Մանկապարտէզներ, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի յիշատակման ձեռնարկներ, ՄԱԿ-ի գործունէութիւն, Ռազմավարական ծրագրում, սուրիահայութեան օժանդակութեան ծրագիրներ, ուղեկից եւ այլ կազմակերպութիւններու հետ փոխ-յարաբերական գործունէութիւն: Կեդրոնական վարչութիւնը եւ երեք շրջանները տեղեկացուցին իրենց ծրագիրներուն, արձանագրած յաջողութիւններուն եւ դիմագրուած դժուարութիւններուն մասին: Սուրիայէն, Կեդրոնական վարչութեան անդամ ընկի. Զեփիւռ Բէխեան կապ հաստատեց համացանցի միջոցաւ եւ զեկուցեց սուրիահայութեան ներկայ իրավիճակին մասին:

Տրուած ըլլալով որ, Միջ-Շրջանային վարչական նման ժողով մը դրական անդրադարձ ունեցաւ մասնակցողներուն վրայ, ամրապնդելով երեք շրջաններու միջեւ փոխ-յարաբերութիւնները, Գանատայի Շրջ. վարչութիւնը կը թելադրէ Կ.Վ. շարունակել կազմակերպել նմանօրինակ ժողովներ:

ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի 58-րդ խորհրդաժողով

Գանատայի շրջանէն ընկերուհիներ Անի Պապիկեան, Մարալ Դերձակեան, Լիւսի Շահինեան, Թալին Ապրաքեան եւ Նաթալի Մանուկեան ներկայ գտնուեցան ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի 58-րդ խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ 10-13 Մարտ 2014, Նիւ Եորքի մէջ:

Վիճակահանութեան տոմսեր

2013-2014 տարեշրջանին Կեդրոնական վարչութիւնը մեզի յանձնեց 250 վիճակահանութեան տոմսեր, որոնց փոխարժէքը ուղարկեցինք 12,500.00 ամ. տոլար:

Դրամահաւաք

ՀՕՄ-ի Հիմնադրամի ֆոնտը ուռճացնելու նպատակով, Կ.Վ. կազմեց Դրամահաւաքի յանձնախումբ մը: Յանձնախումբին մօտ, Կ.Վ. ներկայացուցիչն է ընկի. Նայիրի Շահինեան: Գանատայի շրջանէն յանձնախումբին անդամ նշանակուած են ընկերուհիներ Մարօ Ֆրունճեան (ատենապետ) եւ Գլարա Յակոբեան:

Դրամահաւաքի յանձնախումբին մօտ, Շրջ. վարչութեանս կապն է ատենապետ ընկի. Սեդա Մալխասեան: Դրամահաւաքի յանձնախումբի աշխատանքներուն օժանդակելու նպատակով, վարչութիւնս կազմեց ենթայանձնախումբ մը, նշանակելով ընկերուհիներ Մոնթրէալէն եւ Թորոնթոյէն:

Վարչութեանս որոշումով, իւրաքանչիւր մասնաճիւղէ խնդրուեցաւ նիւթական աջակցութիւն: Այսպէս, Գանատայի շրջանը կը մասնակցի հետեւեալ ձեւով՝

Շրջանային վարչութիւն	\$10,000
Մոնթրէալ «Սօւէ»	\$10,000
Թորոնթօ «Ռուբինա»	\$10,000
Լաւալ «Շուշի»	\$5,000
Միսիսսոկա «Առագաստ»	\$3,000
Վանգուվըր «Արագ»	\$3,000
Օթթաուա «Սեւան»	\$1,000
Գեմպրիճ «Մեդրի»	\$1,000
Սէնթ Գաթրինզ «Արագ»	\$1,000
Համիլթըն «Արեւ»	\$500
Ուինձըր «Ռուբինա»	\$500
ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՒԴԵՐՈՒ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ	\$45,000 զան.
Ազգայիններէ նուիրատուութիւն	\$27,130 զան.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	\$72,130 զան.

Կեդրոնական վարչութեան փոխանցեցինք US\$60,000:

Հայաստան

○ Ախուրեանի Սօր ու Մանկան Առողջապահության Կեդրոն/Ծննդատուն

2013-2015 տարեշրջանին, Թորոնթոյի «Ռուբինա», Մոնթրեալի «Սօւէ», Վանգուվըր «Արագ» եւ Ուինձորի «Ռուբինա» մասնաճիւղերը իրենց նիւթական աջակցութիւնը բերին Սօր ու Մանկան Առողջապահության Կեդրոն-Ծննդատան: Նաեւ, ազգայիններ իրենց նուիրատուութիւնը կը կատարեն ի նպաստ այս կեդրոնին:

Արցախ

○ ՀՕՄ-ի Արցախի «Սօւէ» Մանկապարտէզ

Արցախի Հաղորդի Մեծ Թաղեր գիւղի ՀՕՄ-ի Սօւէ մանկապարտէզի ծրագրին 2013-2014 տարեշրջանին փոխանցեցինք 19,286.00 ամ. տոլար: Իսկ 2014-2015ին 18,691.00 ամ. տոլար: Մոյն գումարներուն կ'աւելնայ նաեւ ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւելեան շրջանի տարեկան մնայուն 12,000 ամ. տոլարը եւ Արցախի կառավարութեան տարեկան յատկացումները:

Ստեփանակերտի «Սօւէ» մանկապարտէզի կառոյցի ներկայ իրավիճակը եւ վերանորոգման ծախսերու ծաւալը ի մտի ունենալով, ինչպէս նաեւ երկրաչափերու հետ խորհրդակցելէ ետք, Կ.Վ. որոշեց ամբողջովին նոր շէնք մը կառուցել հիմնուած ներկայ չափանիշերու եւ ամուր հիմքերու վրայ: Ի մտի ունենալով այսպիսի ծրագրի մը կարելորութիւնն ու կշիռը, Կ.Վ. առաջադրեց կազմել յանձնախումբ մը բաղկացած աշխարհագրական տարբեր տարածքներէ ընկերուհիներով, որուն հիմնական պատասխանատուութիւնը պիտի ըլլայ նիւթական նպաստ ապահովել, իրականացնելու համար մանկապարտէզի շէնքի ծրագիրը: Հետեւաբար, կը խնդրէ մեր շրջանէն ներկայացուցիչ: Առ այդ, վարչութիւնս նշանակեց ընկհ. Հուրի Նաճարեանը:

○ Արցախի վիճակահանութեան տոմսեր

2013-2014 տարեշրջանին, ստացանք Արցախի վիճակահանութեան 200 տոմսեր որոնց փոխարժէք Կ.Վ. ուղարկեցինք 1,000.00 ամ. տոլար:

Իսկ 2014-2015 տարեշրջանին ստացանք 400 տոմսեր, որոնց փոխարժէքը՝ 2,000.00 ամ. տոլար ուղարկեցինք Կեդրոնական վարչութեան: Շրջանս չկարողացաւ սպառել բոլոր տոմսերը, սակայն ամբողջական գումարը փոխանցեցինք Կեդրոնական վարչութեան:

Ջալախք

2013-2015 տարեշրջանին, ՀՕՄ-ի Ջալախքի Բազմազանակ ընտանիքներու ծրագրին համար, Կ.Վ. փոխանցեցինք 3,000.00 ամ. տոլար:

Պուլկարիոյ մանկապարտէզ

Ընթացք տալով ՀՕՄ-ի Համահայկական 70-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 48 բանաձեւին, վարչութիւնս Պուլկարիոյ ՀՕՄ-ի մանկապարտէզներուն նուիրեց 1,000.00 ամ. տոլար:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ

ՀՕՄ-ի շրջաններ

ՀՕՄ-ի այլ շրջաններու հետ կապ հաստատած ենք նամակագրութեամբ եւ ի պահանջեալ հարկին հեռաձայնային հաղորդակցութեամբ:

ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւմտեան եւ Արեւելեան Շրջաններէն ստացանք Պատգամաւորական ժողովներու հրաւերներ: Այս առթիւ նամակով մեր լաւագոյն բարեմաղթութիւնները փոխանցեցինք:

Հայաստանի միաւորի ծրագիրներու իրագործման ի նպաստ դրամահաւաքին, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջ. վարչութեան փոխանցեցինք 500 գան. տոլար: Ստացանք նաեւ 25 հատ սեղանի օրացոյցներ, որոնց փոխարժեքը՝ US\$200 ուղարկեցինք Հայաստանի Շրջ. վարչութեան:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէ

ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի քարոզչական աշխատանքներու համակարգման համար յառաջացած յանձնախումբին մէջ, ՀՕՄ-ի Շրջ. վարչութեան ներկայացուցիչն է ընկի. Նորա Կէօնճեանը:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 15 Նոյեմբեր 2013, ՀՅԴ Գանատայի Հայ Դատի հանգանակային ընդունելութիւն:
- 1 Փետրուար 2014, խորհրդակցական հանդիպում Լաւալի հայ կեդրոնէն ներս, ներկայութեամբ Սոնթրէալի ու Լաւալի հայ կեդրոններէն ներս գործող ուղեկից միութիւններու ներկայացուցիչներուն:
- 27 Մայիս 2014, Հայ Դատի կազմակերպութեամբ Օթթաուայի մէջ, Գանատայի խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման M-380

բանաձեռի 10-ամեակին ու Հայաստանի Ա. հանրապետության 96-ամեակին նուիրուած հանդիսութիւն:

- 30 Հոկտեմբեր 2014, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործոց նախարար Կարէն Միրզոյեանի ՀՅԴ Գանատայի կառոյցի ներկայացուցիչներու հետ հանդիպում:
- 8-9 Նոյեմբեր 2014, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի արտակարգ ընդհանուր ժողովին, Թորոնթոյի Հայ Կեդրոնէն ներս, վարչութիւնս նշանակեց ընկհ. Հուրի Նաճարեանը որպէս ներկայացուցիչ:
- 18 Մարտ 2015, խորհրդակցական հանդիպում:
- 3 Մայիս 2015, Հ.Հ. Սփիւռքի նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեանի Մոնթրէալ այցելութեան պատեհ առիթով զեկուցական հանդիպում:
- 23 Մայիս 2015, ՀՀ խորհրդարանական պատուիրակութեան անդամներուն հետ ընդունելութիւն-ճաշ:
- 2 Յունիս 2015, Հայ Դատի կազմակերպութեամբ ընդունելութիւն Օթթաուայի մէջ, Յեղասպանութեան ճանաչման գծով թիւ M-587 բանաձեռի ընդունման համար երախտագիտութիւն յայտնելու Գանատայի խորհրդարանին, ինչպէս նաեւ տօնելու Հայաստանի Ա. անկախութեան 97-րդ տարեդարձը:

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Համագանատական Մայր Յանձնախումբ

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի համագանատական մայր յանձնախումբի մօտ, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներն են Մոնթրէալէն ընկհ. Սեդա Մալխասեան եւ Թորոնթոյէն ընկհ. Վարսենիկ Սարգիսեան, իսկ հանգանակութեան յանձնախումբին մէջ նշանակեցինք ընկհ. Հուրի Հաքիմեանը եւ օրդ. Անի Քարասեֆերեանը: Յանձնախումբի դրամահաւաքի աշխատանքներուն օժանդակեցինք ուղարկելով 6,000 տոլար:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 27 Ապրիլ 2014, Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակի Գանատայի Մարմնի կազմակերպած Մեծ Եղեռնի 99-րդ տարեդարձի ոգեկոչման քաղաքական հաւաք:
- 16 Նոյեմբեր 2014, Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակի Գանատայի Մարմնի հանգանակային կալա-ճաշկերոյթ, Մոնթրէալ:
- 19 Ապրիլ 2015, «Միասնութեան քայլարշաւ», Թորոնթօ:
- 20 Ապրիլ 2015, միջ-եկեղեցական արարողութեան նուիրուած Ապրիլեան եղեռնի զոհերուն, Մոնթրէալ:
- 23 Ապրիլ 2015, Մոնթրէալի քաղաքապետարանէն ներս ընդունելութիւն:
- 24 Ապրիլ 2015, Օթթաուայի ժողովրդային հաւաք:
- 26 Ապրիլ 2015, Հայ Կաթողիկէ եկեղեցոյ Ապրիլեան Նահատակաց ասանդական Ս. Պատարագ, Մոնթրէալ:

- 3 Մայիս 2015, «Ընդդեմ Ցեղասպանության» քայլարշավ, Մոնթրեալ:
- 3 Մայիս 2015, Հայոց Ցեղասպանության Հարիւրամեակի ընդունելություն եւ պաշտօնական հանդիսություն Մոնթրեալի Place des Arts սրահէն ներս:

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարան

Զանազան առիթներով կապ պահեցինք Գանատայի Հայոց Թեմի Անդրանիկ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի, ապա՝ Գերշ. Տ. Մեղրիկ Սրբ. Եպս. Բարիքեանի եւ Ազգային Վարչութեան հետ:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 23 Յուլիս 2013, Էջմիածնական Թեմի Գանատայի առաջնորդական տեղապահ՝ Տէր Նաթան Արք. Յովհաննիսեանի բարի գալուստի ու ծանօթացման հանդիպում, Էջմիածնական Թեմի Ազգային Առաջնորդարանէն ներս:
- 11 Դեկտեմբեր 2013, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի տօնաձառի լուսաւորում եւ այդ առթիւ կատարուած ընդունելություն:
- 9-10 Մայիս 2014-ին, ընկի. Մեղա Մալխասեան ներկայ գտնուեցաւ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովին եւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի նուիրուած հանդիսութեան: Իսկ, 22-23 Մայիս, 2015-ին Գեմպրիճի մէջ կայացած ժողովին, վարչութեանս ներկայացուցիչն էր ընկի. Գեղուհի Պասթաճեան:
- 1 Յունիս 2014, Թեմիս նորընտիր Առաջնորդ Գերշ. Տ. Մեղրիկ Եպս. Բարիքեանի անդրանիկ Ս. Պատարագ, ինչպէս նաեւ Սրբազան Հօր ի պատիւ «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբի համերգ:
- 25 Յունիս 2014, Գեր. Տ. Մեղրիկ Եպս. Բարիքեանի Գանատայի Թեմի Առաջնորդ ընտրութեան առթիւ շնորհաւորական այցելություն:
- 9 Սեպտեմբեր 2014, Էջմիածնական Թեմի նորընտիր Առաջնորդ Ծայրագոյն Վարդապետ Աբգար Յովակիմեանի, բարի գալուստի ու ծանօթացման հանդիպում, Էջմիածնական Թեմի Ազգային Առաջնորդարանէն ներս:
- 29 Հոկտեմբեր 2014, բարի գալուստի ու զօրակցութեան հանդիպում Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Սրբ. Արք. Սարգիսեանի հետ, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանէն ներս:
- 5 Դեկտեմբեր 2014, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Մսուրի ու Կաղանդի Ծառի լուսաւորում:
- 16 Փետրուար 2015, Գանատայի Ազգային Առաջնորդարանէն ներս խորհրդակցական հանդիպում:

Քոյր Միություններ-Կազմակերպություններ

Ներկայ գտնուեցանք քոյր միություններու եւ կազմակերպություններու Ներկայացուցչական ժողովներուն ու ձեռնարկներուն, հայ վարժարաններու

հանդեսներուն, իսկ բացակայութեան պարագային նամակով իրենց հաղորդեցինք մեր սրտագին բարեմաղթութիւնները:

Սուրիահայութեան Օժանդակութեան Մոնթրէալ/ Լաւալ համագաղութային յանձնախումբին մէջ, ՀՕՄ-ի ներկայացուցիչ նշանակեցինք ընկհ. Ֆլօրա Կիրակոսեանը:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 25 Սեպտեմբեր 2013, Հայաստանէն ժամանած՝ IATA-ի խորհրդաժողովի համար յանձնախումբին ծանօթացման հանդիպում, Մոնթրէալի Հայ Կերտնէն ներս:
- 26 Սեպտեմբեր 2013, Պրն. Յարութ Շիթիլեանի քաղաքապետարանի պաշտօնի ընտրապայքարի դրամահաւաքի ընդունելութիւն:
- 13 Հոկտեմբեր, 2013, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանի 43-րդ մարզական խաղերու առթիւ ընդունելութիւն, փակման հանդիսութիւն եւ տողանցք:
- 30 Նոյեմբեր 2013, Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան 123-ամեակի պաշտօնական հանդիսութիւն:
- 23 Նոյեմբեր, 2013, ՀՄԸՄ-ի 95-ամեակի տօնակատարութեան ձեռնարկ, Թորոնթօ եւ 9 Փետրուար, 2014, Մոնթրէալ:
- 16 Դեկտեմբեր 2013, Հ. Յ. Դ. «Միհրան Փափագեան» կոմիտէի Ամանորի եւ Սրբ. Ծնունդի առիթով քոքթէյլ-հաւաք:
- 19 Յունուար 2014, Պոլսահայ միութեան կազմակերպութեամբ՝ Հրանդ Տինքի մահուան 7-րդ տարելիձին նուիրուած ձեռնարկ:
- 12 Փետրուար 2014, Լաւալի Սրբ. Գեորգ եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմակերպութեամբ, Տէր Հրայր քին. Նիկոլեանի ողջերթի եւ Հայր Վարդան Թաշճեանի բարի գալուստի քոքթէյլ-հաւաք:
- 22 Մարտ 2014, Քէպէգի Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմնի կազմակերպած մենահամերգ եւ ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան անունով նուիրեցինք \$500.00:
- 7 Մայիս 2014, Քէպէգի Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմնի կազմակերպած ժողովրդային հաւաք-զեկոյց՝ Քէսապի իրավիճակին մասին:
- 21 Սեպտեմբեր 2014, ՀՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտէի հրաւերով Հայաստանի վերանկախացման 23-րդ տարեդարձի առիթով ժողովրդային հաւաք տօնակատարութիւն:
- 30 Հոկտեմբեր 2014, Սրբ. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան զեկուցական ընդունելութիւն:
- 30 Նոյեմբեր 2014, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանի 44-րդ մարզական խաղերու առթիւ ընդունելութիւն, փակման հանդիսութիւն եւ տողանցք:
- 6 Դեկտեմբեր 2014, Հ.Յ. Դաշնակցութեան 124-ամեակի պաշտօնական հանդիսութիւն:

- 17 Դեկտեմբեր 2014, ՀՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտեի Ամանորի եւ Սրբ. Ծնունդի առիթով հիւրասիրութիւն-հանդիպում:
- 2 Մայիս 2015, Սրբ. Յակոբ վարժարանի տարեկան հանգանակային ճաշկերոյթ:
- 13 Մայիս 2015, Մոնթրէալի հայ կեդրոնի նորոգուած ճաշարանի պաշտօնական բացում:
- 31 Մայիս 2015, Հայաստանի Ա. Հանրապետութեան 97-րդ տարեդարձի տօնակատարութիւն եւ պաշտօնական հանդիսութիւն:

Սրբ. Գեորգ եկեղեցւոյ շինարարութիւն

3 Մարտ 2014-ին, Շրջանային վարչութիւնը լիակազմ հանդիպում ունեցաւ Լաւալի Սրբ. Գեորգ եկեղեցւոյ շինարարութեան հանգանակիչ յանձնախումբէն տիարք բժիշկ Կարպիս Հարպոյեանի, Կարպիս Մէշէֆէճեանի եւ Կարօ Թամամեանի հետ եւ հաստատեց ՀՕՄ-ի Շրջ. վարչութեան նիւթաբարոյական աջակցութիւնը, եկեղեցւոյ կառուցման աշխատանքներու կապակցութեամբ:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 20 Սեպտեմբեր 2014, Լաւալի Սրբ. Գեորգ եկեղեցւոյ հանգանակային կալա ճաշկերոյթ:
- 29 Նոյեմբեր 2014, Լաւալի Սրբ. Գեորգ եկեղեցւոյ Հանգանակիչ Մարմնի կազմակերպութեամբ՝ Աշուղական եւ Գուսանական Երաժշտութեան մենահամերգ:
- 5 Դեկտեմբեր 2014, Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի կազմակերպած Պրն. Պերճ Չաքրճեանի նկարչական ցուցահանդէս, ի նպաստ Ս. Գեորգ եկեղեցւոյ կառուցման:

Հորիզոն Շաբաթաթերթ

Վարչութիւնս իր տարեկան յատկացումէն անկախ, Հորիզոն շաբաթաթերթի բացառիկին նուիրեց 2,000 տոլար (տարեկան 1,000 տոլար): Բոլոր մասնաճիւղերը կատարեցին իրենց յատկացումները եւ հովանաւորեցին Հորիզոն «Մանկապատանեկան» բաժինը:

2013-2015 տարեշրջանին համար, Հորիզոն շաբաթաթերթին փոխանցեցինք 29,520 տոլար, ներառեալ Շրջ. վարչութեան յատկացումը:

Հ.Հ. Դեսպանութիւն

Հայաստանի վերանկախացման տօնին առթիւ ՀՕՄ-ի մեծ ընտանիքը Դեսպանատան նուիրեց 4,350 տոլար 2013-ին եւ 4,850 տոլար 2014-ին:

29 Յունիս 2014, ներկայ գտնուեցանք Հայաստանի Հանրապետության դեսպանատան նորոգութիւններու հանգանակային ընդունելութեան եւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի անունով նուիրեցինք 5,000 տոլար այս դրամահաւաքին, հետեւեալ մանրամասնութեամբ:

- Գանատայի Շրջանային վարչութիւն 1,000 տոլար:
- Մոնթրէալ «Սօսէ» մասնաձիւղ 1,000 տոլար:
- Թորոնթօ «Ռուբինա» մասնաձիւղ 1,000 տոլար:
- Լաւալ «Շուշի» մասնաձիւղ 1,000 տոլար:
- Օթթաուա «Սեւան» մասնաձիւղ 500 տոլար:
- Միսիսսոկա «Առագաստ» մասնաձիւղ 500 տոլար:

Գանատայի Շրջանի հիմնադրութեան 25-ամեակին առիթով, ՀՀ դեսպանի Տիկ. Մարիա Եգանեան հիւրընկալեց ՀՕՄ-ի ընկերուհիները դեսպանատան մէջ, Կիրակի, 7 Յունիս 2015-ի յետմիջօրէին: Այս հանդիպումին ներկայ գտնուեցան Կ.Վ. փոխատենապետ ընկի. Նայիրի Շահինեան, Շրջ. վարչութեան ներկայ եւ նախկին անդամներէ 27 ընկերուհիներ, Օթթաուայի մասնաձիւղի վարչական 3 ընկերուհիներ եւ հիւրաբար՝ ընկի. Համեստ Պեօճէքեան, Հայաստանի «Կռունկ» մասնաձիւղի ատենապետ: Այս իրայատուկ ընդունելութեան ընթացքին, Տիկ. Եգանեանի նախաձեռնութեամբ, գեղարուեստական յայտագրով ելոյթ ունեցան երկու տաղանդաւոր հայ երիտասարդներ՝ գանատարնակ Մայքըլ Թուրապեան եւ Հայաստանէն Տիանա Ատամեան: Մեծապէս կը գնահատենք Տիկ. Եգանեանի այս նախաձեռնութիւնը եւ ջերմ ու անկեղծ ընդունելութիւնը:

Հ.Հ. Սփիւռքի Նախարարութիւն

Հ.Հ. Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած Հայրենիք-Սփիւռք 5-րդ համաժողովին՝ Սեպտեմբեր 19-20-21, 2014 Երեւան, ներկայ գտնուեցաւ վարչութեանս ատենապետ ընկի. Սեդա Մալխասեան: Բացման հանդիսութեան ընթացքին խօսք առաւ ՀՕՄ-ի Կ.Վ. ատենապետ ընկի. Վիգի Մարաշլեան: Համաժողովին արծարծուեցան երեք կարեւոր նիւթեր՝ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւն, Ցեղասպանութեան 100-ամեակ, Սուրիահայութեան իրավիճակ:

Հ.Հ. Սփիւռքի Նախարարութեան Տարեգիրքին համար փոխանցեցինք մեր շրջանի գործունէութեան մասին տեղեկութիւններ:

2013-2015 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ՀՕՄ-Ի ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

ՄԱՍՆԱՃԻԴԵՐ

\$725,673.00

ՇՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\$242,422.00

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

\$968,095.00

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարչությունս պարտք կը զգայ ի սրտե շնորհակալութեան խօսք ուղղելու Գանատայի Հայոց Թեմի Անդրանիկ Առաջնորդ Գերշ. Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանին, ինչպէս նաեւ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մեղրիկ Սրբ. Եպս. Բարիքեանին, ՀՀ դեսպան Պրն. Արմէն Եզանեանին եւ տիկնոջ Մարիա Եզանեանին, մեր հոգեւոր հայրերուն, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին, քոյր միութիւններուն, Հորիզոն Շաբաթաթերթի խմբագրութեան եւ անձնակազմին, Սրտե Սիրտի եւ Գրպանի օրացոյցի նուիրատուներուն, հայրենիքի մեր ծնողազուրկ երեխաներու եւ ուսանողներու խնամակալներուն, ՀՕՄ-ի Դրամահաւաքի նուիրատուներուն, դասախօսներուն, Ազգային վարժարաններու տնօրէններուն եւ ուսուցիչներուն, իրաւաբան Պրն. Արմենակ Գազանձեանին, ընկ. Շահէ Բաբիսեանին, ընկ. Լիզա Գարբուզեանին, ընկ. Սիլվա Էհրամձեանին, ընկ. Սօսէ Պեօձէքեանին, ընկ. Սօսի Տայեան-Արապեանին, Տիկ. Լորի Աշճեանին եւ յատկապէս ՀՕՄ-ի համայն բարեկամներուն եւ բարերարներուն:

Յատուկ շնորհակալութեան խօսք ունինք ընթացիկ տարեշրջանի Շրջանային վարչութեանս գործունէութեան ծրագրային եւ կազմակերպական աշխատանքներուն սատարող յանձնախումբերու անդամներուն, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի տասը մասնաճիւղերու վարչութիւններուն եւ իր բոլոր անդամներուն, որոնք կը կազմեն մեր գործնական աշխատանքի ամենէն հիմնական միաւորները:

ԵԶՐԱՓՈՒՄ

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Շրջանային Վարչութիւնը 22-րդ Պատգամաւորական Ժողովին կը ներկայացնէ նիւթաբարոյական իր երկամեայ գործունէութեան տեղեկագիրը՝ առ ի քննարկում եւ արժեւորում:

Շրջանային Վարչութեանս երկամեայ այս տեղեկագիրը կը պարզէ 2013-2015 տարեշրջանի աշխատանքի լայնածաւալ գործունէութիւնը, որ յստակ պատկերացումն է վարչութեանս եւ իր տասը մասնաճիւղերու համագործակցութեան: Այս անցնող տարեշրջանին, վարչութիւնս դէմ հանդիման գտնուեցաւ չնախատեսուած խոչընդոտի մը՝ զանատական տոլարի արժեզրկումը, բաղդատմամբ ամերիկեան տոլարի: Վարչութիւնս յարգելու համար Կեդրոնական վարչութեան յատկացումներու խոստումները, որ կը կատարուին ամերիկեան տոլարով, մասնաճիւղերէ զանձուած զանատական տոլարի գումարներու տարբերութիւնը ամբողջացուցած է իր հաշիւէն:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչությունը հպարտ է իր շուրջ համախմբուած նուիրեալներու փաղանքով: Այս ուժն է, որ յոյս ու եռանդ կը ներշնչէ, իր գործունէութիւնը շարունակելու եւ ՀՕՄ-ի բոլոր ծրագիրները իրականացնելու: Սակայն, քայլ պահելու համաշխարհային արագընթաց զարգացումներուն, ինչպէս նաեւ Գանատայի մէջ հայ գաղութի դիմագրաւած աշխարհագրական եւ քաղաքական փոփոխութիւններուն հետ, վարչութիւնս կենսական կը նկատէ ունենալ համագաղութային տեսլական մը, արդիականացնել մեր գործելաոճը եւ երիտասարդացնել մեր շարքերը, բարելաւելու մեր 25-ամեայ երիտասարդ շրջանի կարողութիւնները:

Վարձքը կատար բոլորին: